



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.09.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/56

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.09.2017թ. թիվ 03/26-3/16494-17 գրությամբ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 04.09.2017թ. թիվ 40-2350 գրության հիման վրա, 12.09.2017թ. թիվ 03/26-3/16494-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն 15.09.2017թ. թիվ ՀՀ ՖՆ-1/17 գրությամբ հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.08.2017թ. տրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 165 810 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերությունն հայտնել է, որ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի տնօրենը հանդես է գալիս որպես միակ լիազորված ֆիզիկական անձ, ով իրավունք ունի ստորագրելու վճարման հանձնարարագրեր և այլ նմանատիպ փաստաթղթեր: Սկսած 19.08.2017թ. Ընկերության տնօրենը գտնվել է արտերկրում, իսկ պարտքը ձևավորվել է 20.08.2017թ. հետո՝ եկամտային հարկի հաշվետվությունը հարկային մարմնին ներկայացնելուց հետո: Հաշվի առնելով, որ տնօրենը չի կարողացել վերադառնալ ժամանակին, վճարումն իրականացվել է միայն 31.08.2017թ. ընդամենը 2 օր ուշացումով:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից ներկայացրել է վճարման հանձնարարականների պատճենները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 04.09.2017թ. թիվ 40-2350 գրությամբ հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ներհրապարակային ($L=1715,3մ$) երկաթուղային գծերի գեոդեզիական հանույթի

իրականացման, երկայնական պրոֆիլների կառուցման և հաստատված անձնագրի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/17» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն 22.08.2017թ. ներկայացրել է 780 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:

Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.08.2017թ. տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 165 810 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/56 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/56 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

* 1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ներհրապարակային (L=1715,3մ) երկաթուղային գծերի գեոդեզիական հանույթի իրականացման, երկայնական պրոֆիլների կառուցման և հաստատված անձնագրի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն 22.08.2017թ. հայտ է ներկայացրել:

2. «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 29.08.2017թ. տրամադրված եզրակացության՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն 22.08.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 165 810 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.08.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.09.2017թ. թիվ 03/26-3/16494-17 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 04.09.2017թ. թիվ 40-2350 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ներհրապարակային (L=1715,3մ) երկաթուղային գծերի գեոդեզիական հանույթի իրականացման, երկայնական պրոֆիլների կառուցման և հաստատված անձնագրի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն 22.08.2017թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 29.08.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն 22.08.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 165 810 ՀՀ դրամի չափով, որը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.08.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝**

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պարավիրարտուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին փվյալ մասնակցի հեղազա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հեղազա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, Խորհուրդը գտնում է, որ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.09.2017թ. թիվ 03/26-3/16494-17 գրությամբ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 00802905) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ